

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՍԻՆ

## Բ. Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Ա. Ն. ԵԿԱՆՅԱՆ

Կապիտալ ներդրումների կարևոր աղբյուր են ձեռնարկությունների սեփական ինվեստիցիոն միջոցները՝ շահույթի կուտակման մասը, հիմնական ֆոնդերի ամորտիզացիոն հատկացումները, արժեթղթերի իրացումից ստացվող գումարները: Կարող են օգտագործվել նաև առկա ավելորդ սարքավորումները, այլ պաշարներ, նվիրատվություններ, տեխնիկական ու բարեգործական օգնությունը, անվերադարձ այլ հատկացումներ: Շահույթից ներդրումները կատարվում են հիմնականում արտադրության ընդլայնման, իսկ ամորտիզացիոն ֆոնդից՝ հիմնական ֆոնդերի պարզ վերարտադրության (փոխարինման) համար: Այս սկզբունքը գործնականում մեծ մասամբ հնարավոր չէ ամբողջությամբ իրականացնել: Կախված տեխնիկական առաջադիմության ինտենսիվությունից, գների փոփոխության ուղղությունից և շափից, անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու հնարավորություններից, արտադրության միջոցների վերարտադրության անհրաժեշտությունից՝ հնարավոր է, որ շահույթն օգտագործվի պարզ վերարտադրության համար, կամ ամորտիզացիոն հատկացումների միջոցով ապահովվի նաև արտադրության ընդլայնում:

Արտադրության անընդհատությունը և ընդլայնումը ապահովելու նպատակով ձեռնարկությունները պետք է անհրաժեշտ ներդրումներ կատարեն, որը տարբեր պատճառներով ոչ միշտ է տեղի ունենում, վտանգի տակ դնելով պետական ինվեստիցիոն քաղաքականության իրականացումը: Դրանից խուսափելու և ինվեստիցիոն ակտիվություն ապահովելու նպատակով նախատեսվում են տնտեսական ու վարչական խթաններ, ինչպես նաև պատժապետություն: Նույն նպատակին կարող են ծառայել նաև ստորև առաջարկվող միջոցառումները, որոնք իրենց մեջ կրում են ինչպես խթանման, այնպես և վարչական կարգավորման տարրեր:

1. Արտադրության զարգացումը, արդյունավետության բարձրացումը, արտադրանքի մրցունակության ապահովումն ու ժամանակի պահանջներին համապատասխանեցումը, որոնց իրականացման գործում մեծապես շահագրգռված է պետությունը, անհրաժեշտ են դարձնում արտադրության տեխնիկական վերազինումը, վերակառուցումն ու ընդլայնումը, արտադրության միջոցների կատարելագործումը, առաջադեմ տեխնոլոգիաների, կազմակերպական ու կառավարման նոր մեթոդների ներդրումը, պահանջարկ ունեցող նոր արտադրատեսակների յուրացումը և այլ միջոցառումների իրականացումը, որը պահանջում է զգալի միջոցներ: Ոչ բոլոր ձեռնարկությունները և ոչ միշտ հնարավորություն կամ ցանկություն կունենան տրամադրելու այդպիսիք, մասնավաճեց եթե սեփականատերերը հակված են ստացված շահույթն ընթացիկ սպառմանը: Դրա հետևանքները զգացվում են ավելի ուշ, երբ ար-

տադրանքը դառնում է ոչ մրցունակ, իջնում է արդյունավետությունը, պու-  
կասում են եկամուտները, ձեռնարկությունը կանգնում է սնանկացման եզրին,  
որը ձեռնտու չէ նաև հասարակությանը:

Փոքր շահույթ ունեցող ձեռնարկությունները հնարավորություն չեն ու-  
նենում մեծ միջոցներ հատկացնել նշված փոփոխությունները իրականաց-  
նելու նպատակով, և եթե նրանց համար ձեռնտու կամ հնարավոր չէ վարկ  
վերցնել, իսկ պետական սուբսիդիաներ ստանալը դժվարությունների հետ է  
կապված, ապա դրանք նույնպես կարող են հայտնվել նման դրությամբ մեջ:  
Հարցի լուծման եղանակներից մեկը միջոցների աստիճանական հավաքումն  
է: Կարծում ենք, նպատակահարմար է կիրառել ֆինանսական միջոցների  
կուտակման հետևյալ, որոշ շահով՝ հարկադրանքի մեխանիզմը, որը միա-  
ժամանակ կօժանդակի պետական ինվեստիցիոն քաղաքականությամբ նա-  
խատեսված կապիտալ ներդրումների ծավալները ապահովելուն: Այն ենթա-  
դրում է պետականորեն սահմանել շահույթից կուտակման նորմա, որից ոչ  
պակաս միջոցներ տարեկան ուղղվելու են տվյալ ձեռնարկության արտա-  
դրության զարգացմանը: Եթե այդ միջոցները չեն օգտագործվում, ապա  
կենտրոնացվում են հատուկ ֆոնդերում, դառնում ռեսուրս այլ ձեռնարկու-  
թյուններին վարկավորելու համար: Կենտրոնացված միջոցների դիմաց, ու-  
պես դեպոզիտներ, պետք է վճարվեն տոկոսներ՝ նույնպես պետականորեն  
սահմանված, վերադարձվեն կապիտալ ներդրումներ կատարելու համար ձեռ-  
նարկության առաջին իսկ պահանջով: Դրանք իրենց էությունով հավասարեց-  
վում են ներդրվող միջոցներին, և եթե այդպիսիք տվյալ ճյուղում ըստ գոր-  
ծող կարգի հարկման ենթակա չեն, ապա նշված ձևով կուտակված միջոց  
ները նույնպես չպետք է հարկվեն:

Ցածր շահութաբերության դեպքում նշված կենտրոնացումը հազիվ թե  
իրեն արգարացնի: Բացի դա, այդպիսի ձեռնարկությունը ֆինանսական դժ-  
վարություններ կունենա նույնիսկ շահույթի ոչ մեծ կրճատման դեպքում, այդ  
պատճառով, կարծում ենք, նպատակահարմար է առաջարկված մեխանիզմը  
կիրառել շահութաբերության որոշակի նվազագույն մակարդակից սկսած, օ-  
րինակ՝ 5 տոկոսից ոչ պակաս: Ինվեստիցիոն միջոցների կենտրոնացման  
առաջարկվող եղանակի և դրանով միայն բարձր շահավետ ձեռնարկություն-  
ներ ընդգրկելու նպատակահարմարությունը և նշված սահմանային շահու-  
թաբերության շահը հիմնավորելու նպատակով կարելի է անցկացնել փոր-  
ձագիտական հարցում ձեռնարկությունների ղեկավարների, մասնագետ ֆի-  
նանսիստների և տնտեսագետ գիտնականների չեղակայացուցչական շրջանում:

Գործունեության տարբեր ոլորտներում և ճյուղերում կապիտալատարու-  
թյունից կախված զարգացման համար անհրաժեշտ ներդրումները տարբեր  
են, ուստի, կարծում ենք, նպատակահարմար է նորմատիվի մեծությունը տար-  
բերակել ըստ ճյուղերի: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ  
պլանային ժամանակաշրջանում զարգացման ցանկալի թեմայերը որպես կա-  
նոն միատեսակ չեն լինում գերակայելի բոլոր ճյուղերում, և շահույթից կու-  
տակման նորման նույնպես պետք է տարբերակված լինի ըստ այդ ճյուղերի  
առանձին խմբերի՝ զարգացման նախատեսված թեմայերին համապատաս-  
խան: Սակայն, բոլոր դեպքերում, կարծում ենք, այն ցածր չպետք է լինի  
շահույթի, ասենք, մեկ քառորդից: Կուտակման նորմայի նվազագույն և տար-  
բերակված ըստ գերակայելի ուղղությունների մեծությունների որոշման հա-  
մար նույնպես նպատակահարմար է կիրառել փորձագիտական հարցման  
մեթոդը:

2. Լրիվ վերականգնման (ռենովացիա) ամորտիզացիոն հատկացումնե-

րը<sup>1</sup>, որպես հիմնական ֆոնդերի մաշվածքի դրամական արտահայտություն, օգտագործվում են շարքից դուրս եկող ֆոնդերը նորերով փոխարինելու (պարզ վերարտադրություն) և արտադրության անընդհատությունը ապահովելու համար՝ որպես այդ գործընթացի հիմնական ֆինանսական աղբյուր: Հիմնական առանձին ֆոնդի փոխարինման անհրաժեշտությունը առաջանում է դրա ծառայության ժամկետի վերջին, որը որոշ ֆոնդերի համար (օրինակ՝ շենքեր, կառուցվածքներ) կարող է շատ տասնամյակներ կազմել: Այդ ընթացքում տարեկան ամորտիզացիոն հատկացումները ազատ են և որպես կապիտալ ներդրումներ կարող են օգտագործվել արտադրության զարգացման այլ նըպատակներով (օրինակ, արտադրության ընդլայնում, տեխնիկական վերազինում, հիմնական ֆոնդերի նորացում), ապահովելով համապատասխան եկամուտ:

Ըստ նախկինում ընդունված կարգի, որը մասնակիրորեն դեռ գործում է այժմ որոշ ճյուղերում, ամորտիզացիոն հատկացումների մինչև 1% (իրականում շատ ավելի՝ մինչև 40—50) տոկոսը փաստորեն անվերադարձ կենտրոնացվում էր վերադաս կազմակերպությունների՝ նախարարությունների և գերատեսչությունների տրամադրության տակ՝ ճյուղի հիմնական ֆոնդերի վերարտադրությունը սեփական միջոցներով շապահովող ձեռնարկություններին օգնելու համար: Դա մշտապես արդարացի դժգոհություն էր առաջացնում նոր ձեռնարկություններում, որոնք հիմնական ֆոնդերի փոխարինման կարիք դեռ չէին ունենում:

Ամորտիզացիոն հատկացումների հաշվարկումը և օգտագործումը կանոնակարգվում են պետական ամորտիզացիոն քաղաքականության միջոցով: Այդ հատկացումները հարկման ենթակա չեն և կապիտալ ներդրումների ֆինանսավորման կարևոր աղբյուր են: Դրանց սառեցումը կամ ոչ ըստ նպատակի օգտագործումը վնասում է արտադրության անընդհատությանը և զարգացմանը: Կարծում ենք, նպատակահարմար է ազատ ամորտիզացիոն հատկացումները, ինչպես դա առաջարկել էինք նաև շահույթից կուտակման նորմավորված մասի համար, ժամանակավորապես, մինչև տվյալ ձեռնարկությունում դրանց նպատակին օգտագործման անհրաժեշտությունը, կենտրոնացնել հատուկ ֆոնդերում որպես վարկային ռեսուրս, վճարելով համապատասխան տոկոսներ և առաջին իսկ պահանջով վերադարձնել ըստ նպատակի օգտագործելու համար:

Ձեռնարկությունների շահույթից կուտակումը նորմավորելու և այդ մասի ու ամորտիզացիոն հատկացումների ժամանակավոր կենտրոնացման մասին վերը արված առաջարկությունների գործնական կիրառումը հանրապետության տնտեսության համար կարող է ապահովել մի շարք դրական հետևանքներ: Ձեռնարկությունները ստիպված կլինեն այդ միջոցները անպայմանորեն առանձնացնել ներդրումների համար, ապա նաև օգտագործել արտադրությունը ընդլայնելու, տեխնիկապես վերազինելու, հիմնական ֆոնդերը ժամանակին վերակառուցելու և փոխարինելու, արտադրանքի որակը բարձրացնելու և տեսականին նորացնելու նպատակով: Կարգելիք այդ միջոցների ոչ նպատակային օգտագործումը, որը ֆինանսական հսկողություն իրականացնելու այսօրվա փոքր հնարավորությունների պայմաններում հաճախ տեղի է ունենում: Պայմաններ են ստեղծվում միջոցները ապահով ու ձեռնտու ձևով պահպանելու և կուտակելու, ապա անհրաժեշտ գումար գոյանալուց

<sup>1</sup> Այսպես 1992 թվականից կատարվում են միայն լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումներ, կապիտալ Ռորդումս փաստացի ծախսումները ղամարվում են ընթացիկ և ամբողջությամբ ճեքումում են տվյալ տարվա արտադրանքի ինքնարժեքում:

հետո օգտագործելու, այդ ժամանակամիջոցում դրանց դիմաց տոկոսադրույթ-ներով լրացուցիչ եկամուտ ստանալով: Կենտրոնացվող մասհանումների հաշ-վին ստեղծվում է վարկային զգալի ռեսուրս, որից, ըստ երևույթին ավելի լավ պայմաններով, քան առևտրային բանկերում, կարող են օգտվել ճյուղի բոլոր ձեռնարկությունները սեփական միջոցների պակասի դեպքում, նկատի ունենալով, որ տարեկան շահույթի համարյա միշտ չի բավարարում քիչ թե շատ նշանակալի միջոցառումների իրականացման համար: Կարծում ենք, նորմավորումը զգալի շահով կավելացնի արտադրական կապիտալ ներդրում-ների ծավալը, դրանով իսկ օժանդակելով ճգնաժամից դուրս գալու և շու-կային անցնելու գործընթացին:

Շահույթի կազմում կուտակման պետական նորմավորումը, այդ մասի և ամորտիզացիոն հատկացումների ժամանակավոր կենտրոնացումը որոշու-կիրեն սահմանափակում են ձեռնարկությունների՝ իրենց միջոցները տնօ-րինելու ազատությունը, չեն բխում «Ձեռնարկությունների և ձեռնարկատի-րական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթներից: Այդ պատճառով արված առաջարկությունների իրականացումը պահանջում է օրենսդրական ձևակերպում, օրենքի համապատասխան հոդվածների գործունեության ժա-մանակավորապես կամ մասնակի կասեցում, նշված նորմավորման ու մի-ջոցների կենտրոնացման թույլտվություն և կանոնակարգում, այդ թվում նախատեսելով նաև կենտրոնացվող միջոցների ապահովությունը, վերադար-ձելիությունը, տոկոսադրույթներով հավելումը, ինչպես նաև կենտրոնացումից խուսափելու կամ միջոցները մասամբ թաքցնելու դեպքում պատճառափելի կիրառումը և այլն: Նպատակահարմար է այդ օրենսդրական ակտը կառա-վարություն ներկայացմամբ ընդունել պառլամենտի կողմից ժամանակավոր գործողություն ունեցող որոշման ձևով, իսկ առանձին ճյուղերի համար դը-րույթները կոնկրետացնելու ու մանրամասնելու իրավունքը թողնել կառա-վարությանը՝ համապատասխան նախարարությունների ու գերատեսչություն-ների հետ միասին:

Օրենսդրական փոփոխություններ կատարելու բավարար հիմք կարող է հանդիսանալ ժամանակավորապես տնտեսական արտակարգ դրություն հայ-տարարելու մասին Տնտեսագիտական պրոբլեմների ԳՀԻ առաջարկության ընդունումը, որը հնարավորություն կտար կառավարությանը իրագործել պե-տական կարգավորման խիստ ռեժիմ, իրականացնել համընդհանուր հսկո-ղություն եկամուտների, ծախսումների, հարկային կարգապահության, պե-տական վարկերի նպատակային օգտագործման ու վերադարձելիության, ար-տադրական կուտակման ու վերարտադրության գործընթացների (ներառյալ վերը առաջարկած երկու միջոցառումները), աշխատանքի վարձատրության շահի և եկամուտներում դրա տեսակարար կշռի նկատմամբ, ինչպես նաև սահմանել խիստ պատճառափելի (տնտեսական, վարչական, քրեական) տրվ-յալ ժամանակ գործող իրավական նորմերը խախտող գործողությունների համար:

Իսկ ինչպիսին պետք է լինի ֆոնդը, որտեղ կուտակվելու են միջոցները: Կարծում ենք, այն կարող է լինել պետական ենթակայության, ճյուղային սկզբունքով մասնադիտացված բանկ կամ հիմնադրամ (ֆոնդ): Այն տրնտ-հաշվարկային, իր շահույթով, հնարավոր փոքր անձնակազմով, ձեռնարկու-թյան կարգավիճակով մի կազմակերպություն պետք է լինի, որն առավելու-պես պետք է զբաղվի նշված գործառնություններով՝ նորմավորված կուտակ-

ման ու ամորտիզացիոն հատկացումների կենտրոնացումով և վերագարձու-  
մով, դրանցից վարկեր տրամադրելով:

Ձեռնարկությունները նշված միջոցները փոխանցում են միայն Ճյուղը սպասարկող այդպիսի բանկին (Ֆոնդին), ըստ որում, նույն հաշվի վրա, քանի որ և կուտակման մասի, և ամորտիզացիոն հատկացումների նպատակը նույնն է՝ արտադրութայն զարգացումը և գործոնների վերարտադրությունը, մանավանդ որ այժմյան պայմաններում միայն ամորտիզացիոն հատկացում-  
ները հազիվ թե ապահովեն պահանջվող վերարտադրությունը և անհրաժեշտ է դառնում շահույթից լրացուցիչ միջոցներ ուղղել այդ նպատակին: Փոխան-  
ցումները կատարվելու են ամեն ամիս, ըստ որում՝ ամորտիզացիոն հատ-  
կացումները ամբողջովին, իսկ շահույթից կուտակումը՝ ոչ պակաս նորմա-  
տիվով նախատեսված մասից: Ձեռնարկությունը իր ցանկությամբ կարող է փոխանցել նվազագույնը գերազանցող ցանկացած գումար:

Արտադրութայն զարգացման և գործոնների վերարտադրութայն նպատա-  
կային վարկեր այդ բանկից (Ֆոնդից) կարող են ստանալ միայն Ճյուղի ձեռ-  
նարկությունները, ըստ որում, կարծում ենք, նպատակահարմար է առաջ-  
նային կարգով վարկեր հատկացնել նրանց, որոնց միջոցները բանկում զգա-  
լիորեն ավելի են, քան մյուսներինը:

Միջոցների կենտրոնացումը, կարծում ենք, նպատակահարմար է բոլոր  
Ճյուղերում, սակայն սկզբնական շրջանում կարելի է այն կիրառել արտա-  
դրական այն հիմնական Ճյուղերում, որոնց պոտենցիալը և արտադրութայն  
անընդհատությունը, հետևաբար և կապիտալ ներդրումների ակտիվ հոսքը,  
առավելագույնս են պայմանավորում հանրապետութայն էկոնոմիկայի կեն-  
սունակությունը և ճգնաժամից դուրս գալու ինտենսիվությունը: Դրանք են  
արդյունաբերությունը և տրանսպորտը: Գյուղատնտեսությունը իր մանր տըն-  
տեսություններով հազիվ թե կարողանա դառնալ առաջարկված միջոցառումը  
ներդնելու օբյեկտ, իսկ շինարարությունում, հաշվի առնելով շինարարական  
կազմակերպությունների առկա կարողությունների շնչին օգտագործումը և այդ  
պատճառով հաճախ վնասով գործունեությունը, այն այժմ նպատակահար-  
մար չէ: Բացի դա, արդյունաբերութայն ու տրանսպորտի այնպիսի փոքր  
ձեռնարկությունները, որոնցում արտադրութայն հիմնական գործոնը կեն-  
դանի աշխատանքն է և փոքր է կապիտալ ներդրումների պահանջը, ինչպես  
նաև ցածր արդյունավետություն ունեցող ձեռնարկությունները (օրինակ,  
մինչև 5 տոկոս շահութաբերությամբ) նույնպես նպատակահարմար օբյեկտ-  
ներ չեն այն կիրառելու համար: Միջոցների կենտրոնացմամբ ընդգրկվող  
ձեռնարկությունների ցանկը, ելնելով նշված բնութագրերից, սահմանափա-  
կումներից կամ նաև այլ գործնական նկատառումներից, պետք է կադմվի  
նախարարությունների կողմից, պառլամենտի ընդունած օրենսդրական  
ակ-  
տին համապատասխան:

Կարևոր է նաև կենտրոնացվող միջոցների դիմաց վճարվող տոկոսադրույ-  
թի շափր: Հասկանալի է, որ այն շափրի հավասարվի առևտրային բանկերի  
տոկոսադրություններին, քանի որ դա կխանգարի իրականացնել կենտրոնացման  
հիմնական նպատակը՝ միջոցներ շտեմարկություններին վարկավո-  
րել արտադրութայն զարգացման ու գործոնների վերարտադրութայն համար  
անհրաժեշտ միջոցներով՝ նրանց համար ընդունելի պայմաններով: Այդ, ինչ-  
պես նաև Ֆոնդի կողմից որպես վարկ տրամադրվող գումարի դիմաց տոկո-  
սադրություն, հիմնավորման կարիք ունի: Եթե վերջինը լինի այլ բանկերի տո-  
կոսադրությունների մակարդակին, ապա ձեռնարկությունները միջոցները կենտ-

րոնացնելու խթան չեն ունենա: Մյուս կողմից, պետք է ապահովվի նաև բանկի շահույթը, որը հիմնականում առաջանալու է կենտրոնացման ու վարկավորման տոկոսադրույթների տարբերության հաշվին: Եվ քանի որ կապիտալ ներդրումների պահանջը տարբեր ժամանակներում տարբեր կլինի, ապա նշված տոկոսադրույթները նույնպես ըստ ժամանակի տարբերակման կարիք կունենան և պետք է հաշվարկվեն յուրաքանչյուր ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան: Այդ հաշվարկներում կարելի է նաև օգտագործել փորձագիտական հարցման մեթոդը:

Կարևոր է նաև միջոցների կենտրոնացման հսկողությունը, քանի որ այն ոչ բոլոր դեպքերում է համապատասխանելու ձեռնարկությունների նպատակներին, ինչը կմղի նրանց խուսափել միջոցների փոխանցումից, թաքցնել դրանք տարբեր եղանակներով, շնորհալուծումներ ճշգրիտ ինֆորմացիա և այլն: Հնարավոր են նաև խախտումներ և շարաշահումներ բանկի աշխատողների կողմից: Օրենսդրորեն այդպիսի խախտումները պետք է պատժելի լինեն, դրանց կանխման համար մշակվի համապատասխան մեխանիզմ ու նախատեսվեն պատժաշահներ (տնտեսական, վարչական, իսկ հատուկ դեպքերում՝ նաև քրեական): Կարծում ենք, հսկողության ֆունկցիաները պետք է հանձնարարվեն հենց այն բանկերին (ֆոնդերին), ուր կենտրոնացված են միջոցները: Ենթադրվում է, որ դրանք կիրականացնեն նաև որոշակի աուդիտային աշխատանքներ (հայտնաբերելու համար խախտումները), ուստի ձեռնարկությունները պարտավոր պետք է լինեն այդ բանկերի պահանջով ներկայացնել համապատասխան հաշվետվություններ, անհրաժեշտ ինֆորմացիա, փաստաթղթեր: Դրանք կարող են իրականացնել նաև միջնորդային ֆունկցիաներ, ընտրելով ձեռնարկություններին տրվող վարկերի կամ վերադարձվող միջոցների օգտագործման համար կապալառու կազմակերպություններ, քանի որ լրիվ ինֆորմացիա ունեն բանկից օգուվող բոլոր՝ ինչպես միջոցներ փոխանցող, այնպես և օգտագործող ձեռնարկությունների կարողությունների, կարիքների, ֆինանսական հնարավորությունների և այլ բնութագրերի մասին:

Վերը նշեցինք առաջարկվող լուծումների փորձագիտական գնահատման նպատակահարմարությունը: Կարծում ենք՝ հետաքրքրություն կներկայացնի հետևյալ ինֆորմացիան: 1993 թ. վերջին 215 ձեռնարկությունների (հիմնականում փոքր) ղեկավար աշխատողների շրջանում մեր կողմից այլ նպատակով անցկացված սոցիոլոգիական հետազոտությունում առաջադրված էր նաև հարց ձեռնարկությունների շահույթում պարտադիր կուտակման մասի և այդ մասը պետության կողմից նորմավորելու նպատակահարմարության մասին: Հարցվողների մեծամասնությունը անհրաժեշտ է համարում շահույթի մի զգալի մասը ամեն տարի ուղղել կուտակման, ըստ որում, մոտ 48 %-ը այդ մասը որոշում է շահույթի 45—65, իսկ մոտ մեկ երրորդը՝ 15—35 տոկոսի սահմաններում: Մնացած 20 %-ը չեն մասնակցել հարցի քննարկմանը կամ դժվարացել են պատասխանել:

Հարցվողները պասիվություն են ցուցաբերել ձեռնարկության շահույթում, անկախ սեփականության ձևից, կուտակման նորման պետության կողմից կարգավորելու հարցում. մասնակցել է կեսից քիչ ավելի, ըստ որում՝ նրանց մոտ 40 %-ը դժվարացել է հարցին կոնկրետ պատասխան տալ: Մնացածը համարյա ամբողջությամբ այդպիսի պետական կարգավորումը նպատակահարմար չեն համարել՝ տարեկան կուտակման չափի ընտրությունը թողնելով ձեռնարկության իրավասությունը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կազմել են հարցվողների թվի միայն 30 %-ը:

**Б. О. ЕГИАЗАРЯН, А. Н. ЕГАНЯН — К вопросу об увеличении объема инвестиций на предприятиях.** — Для создания инвестиционных ресурсов и увеличения объемов капитальных вложений за счет собственных средств предприятий в статье предлагается концентрировать свободные амортизационные отчисления и часть ежегодной прибыли по устанавливаемой государством норме накопления временно, до появления необходимости их целевого использования, в специальных отраслевых фондах или специализированных банках как депозиты. Эти средства использовать как кредитные ресурсы для финансирования воспроизводства и развития средств производства предприятий отрасли. Они должны возвращаться предприятиям по первому их требованию для их целевого использования.

Полезность предложения в статье обосновывается теперешним инвестиционным голодом и насущной необходимостью восстановления производственных средств, чем и обусловливается временный характер мероприятия. Описываются ожидаемые положительные последствия, предлагаются условия и механизмы его практического применения. С целью установления величин нормы накопления из прибыли, а также приемлемых для предприятий ставок на депозиты и кредиты рекомендуется использовать метод экспертного исследования.